Իրավաբանների հայկական ասոցիացիա,
ՀՀ Փաստաբանների պալատ,
ՀՀ Փաստաբանական ակադեմիա

«Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում»
12-րդ ամենամյա հանրապետական գիտաժողով

Խորագիր՝ «Փաստաբանի անկախությունը»

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Երևան 2023թ.

Պաշտոնական կանոն 0.0 Սահմանումներ

Սույն կանոններում օգտագործվող հասկացությունները օգտագործվում են հետևյալ իմաստով.

«Կազմակերպիչ» սույն կանոնների իմաստով նշանակում է գիտաժողովի ցանկացած փուլի կազմակերպիչ:

«Գիտաժողովի փուլ» գրավոր և բանավոր փուլերի դեպքում օգտագործվում է համապատասխան փուլ իմաստով:

«Գիտաժողով» օգտագործվում է 2023թ.-ի հունիս-հուլիս ամիսներին կազմակերպվելիք «Փաստաբանություն. ներկա վիճակը և զարգացման հեռանկարները ՀՀ-ում» 12-րդ ամենամյա հանրապետական գիտաժողով իմաստով:

«Զեկույց» օգտագործվում է յուրաքանչյուր մասնակցի կողմից սույն կանոնների դրույթների համաձայն գրված և գիտաժողովի կազմակերպչին էլեկտրոնային տարբերակով ներկայացրած գրավոր զեկույց իմաստով:

«Բանավոր փուլ» նշանակում է մասնակցի զեկույցի բանավոր ներկայացման փուլ:

«Տույժեր» կիրառվում է որևէ կանոնի խախտման համար նախնական միավորի իջեցմամբ:

«Կանոններ» օգտագործվում է զեկույցի սույն պաշտոնական կանոններ, ինչպես նաև ցանկացած այլ կանոնների հավելված իմաստով:

«Մասնակից» օգտագործվում է կազմակերպչին սահմանված ժամկետում գիտաժողովին մասնակցելու հայտ ներկայացրած ուսանող իմաստով:

«Զեկույցի թիվ (համար)» օգտագործվում է գիտաժողովի ժամանակ յուրաքանչյուր զեկույցի համար հատուկ թվային տարբերակում իմաստով:

«Փուլ» օգտագործվում է գիտաժողովի տարբեր ընթացակարգերի և ժամանակահատվածների իմաստով:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ 1.0 Գիտաժողովի կազմակերպումը

1.1 Կազմակերպիչներ.

Իրավաբանների հայկական ասոցիացիա (հապավումը՝ ԻՀԱ), ՀՀ Փաստաբանների պալատ, ՀՀ Փաստաբանական ակադեմիա (www.armla.am, www.advocates.am, www.advschool.am):

Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան 375010, Նալբանդյան 7, գրասենյակ 2, հեռ. 010-54-01-99, 096-44-88-64, ֆաքս՝ 580299, էլեկտրոնային փոստ՝ info@armla.am

1.2 Գիտաժողովի ընթացակարգը.

Գիտաժողովը բաղկացած է երկու փուլերից.

1) գրավոր փուլ,
2) բանավոր փուլ:

1.3 Գիտաժողովի անցկացումը.

Յուրաքանչյուր փուլ անցկացվում է կազմակերպչի կողմից սահմանված վայրում և պետք է իրականացվի սույն կանոնների համաձայն:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ 2.0 Գիտաժողովի մասնակցության իրավունքը և կարգը

2.1 Գիտաժողովին մասնակցելու իրավունք ունեցող անձինք.

1) ԲՈՒՀ-երի իրավաբանական ֆակուլտետների 2-րդ և բարձր կուրսերում սովորող ուսանողները:
2) Քոլեջների իրավաբանական բաժիններում 2-րդ և բարձր կուրսերում սովորող ուսանողները:
3) Մագիստրատուրայի իրավաբանական ֆակուլտետում սովորող ուսանողները:
4) Ասպիրանտուրայի իրավաբանական բաժիններում սովորող ուսանողները:
5) ՀՀ փաստաբանական ակադեմիայի ունկնդիրները:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ 3.0 Մասնակիցների գրանցումը և մասնակիցների զեկույցները

3.1 Մասնակիցների գրանցման ձևը, գրանցման վայրը և գրանցումը.

Գիտաժողովին մասնակցել ցանկացողները մինչև 2023թ.-ի հունիսի 12-ը պետք է առցանց գրանցվեն: Գիտաժողովի առցանց գրանցման հղումը հասանելի է այստեղ: Գիտաժողովի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն կարելի է ձեռք բերել նաև կազմակերպչի ինտերնետային կայքից (տե՛ս սույն կանոնների 1.1 կետը):

3.2 Զեկույցների ընդունման կարգը և ժամկետները.

1) Գիտաժողովին մասնակցելու համար գրանցված յուրաքանչյուր անձ պետք է մինչև 2023թ.-ի հունիսի 30-ը պահանջվող զեկույցի էլեկտրոնային տարբերակը ուղարկի info@armla.am էլեկտրոնային հասցեին:
2) Զեկույցը ընդունվում է կազմակերպչի կողմից և յուրաքանչյուր զեկույց ստանում է անհատական համար, որը զետեղվում է զեկույցի դրսի շապիկի վերին աջ անկյունում:
3) Զեկույցի անհատական համարը տրվում է զեկույցը կազմակերպչին ուղարկելու համար սահմանված ժամկետը լրանալու հաջորդ օրը: Զեկույցները ստուգող խմբի և տեխնիկական ստուգում իրականացնող անձնակազմի կողմից ստուգվում և գնահատվում են մինչև 2023թ.-ի հուլիսի 10-ը:

3.3 Զեկույցի ինքնությունը հաստատող համարը.

Գիտաժողովի յուրաքանչյուր մասնակցի զեկույց կունենա համակարգողի կողմից տրված համար (թիվ): Մասնակիցները պետք է այդ համարները օգտագործեն միայն ինքնության հաստատման նպատակով: Համարի գաղտնիության ապահովման պարտականությունը դրվում է կազմակերպչի վրա:

3.4 Զեկույցի հանձնումը.

Բոլոր զեկույցները պետք է համապատասխանեն հետևյալ ընդհանուր պահանջներին.

1) Գիտաժողովի յուրաքանչյուր մասնակից պետք է սահմանված ժամկետներում կազմակերպչին ներկայացնի զեկույցի էլեկտրոնային տարբերակը:
2) Յուրաքանչյուր զեկույցի շապիկ պետք է պարունակի միայն հետևյալը.
   - գիտաժողովի մասնակցի համարը, որը դրվում է կազմակերպչի կողմից,
   - գիտաժողովի թեմայի անվանումը,
   - գիտաժողովի ամսաթիվը:

3.5 Զեկույցների ֆորմատը.

Բոլոր զեկույցները պետք է համապատասխանեն հետևյալ ֆորմատին.

1) 10-15 համակարգչային էջ,
2) A4 ֆորմատի (21x29.7 սմ) թղթի վրա,
3) տեքստի տառատեսակը և չափսը՝ Sylfaen 12,
4) զեկույցի տեքստի բոլոր մասերը, ինչպես նաև տողատակի ծանոթագրություններն ու խորագրերը, պետք է լինեն միաբացվածք (single-spaced),
5) լուսանցքների պահպանումը բոլոր կողմերից պետք է ունենա 2.5 սմ՝ չհաշված էջահամարները:

3.6 Զեկույցի նկարագիրը.

Զեկույցը պետք է բաղկացած լինի հետևյալ մասերից.

1) Բովանդակություն,
2) Ներածություն,
3) Նկարագրական մաս,
4) Եզրափակիչ մաս,
5) Օգտագործված գրականության ցանկ:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ 4.0 Փաստաբանները

4.1 Գիտաժողովի գրավոր և բանավոր փուլերի դատավորները և նրանց ընտրության կարգը.

Գիտաժողովի գրավոր փուլը գնահատում է դատավորներից՝ համապատասխան մասնագետներից կազմված ստուգող խումբը, որի անհատական կազմը և թվաքանակը որոշվում է կազմակերպչի կողմից:

4.2 Կազմակերպչի տեղեկացումը մասնակիցների և դատավորների անհամապատասխանության վերաբերյալ.

Գիտաժողովի բանավոր փուլի ընթացքում մասնակիցները կազմակերպչին պետք է տեղեկացնեն այն մասնագետների, փաստաբանների կամ հավանական մասնագետների և փաստաբանների անունները, որոնց հարաբերությունները մասնակցի կամ տվյալ ԲՈՒՀ-ի կամ քոլեջի հետ այնպիսին է, որ կասկած է առաջացնում այդ դատավորի անկողմնակալության վերաբերյալ՝ տվյալ մասնակցի բանավոր զեկույցը գնահատելիս: Նման դեպքերում կազմակերպիչը պետք է քննարկի փաստաբան(ներ)ին վերաբերող հարցը և այդ հարցի կապակցությամբ կայացնի վերջնական որոշում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ 5.0 Գիտաժողովի փուլերը

5.1 Գրավոր փուլ.

Գիտաժողովի գրավոր փուլում առավելագույն միավորներ հավաքած մինչև 5 լավագույն մասնակիցները կանցնեն գիտաժողովի հաջորդ՝ բանավոր փուլ: Գրավոր փուլում դատավորների կողմից մասնակիցներին նշանակած միավորները կազմակերպչի կողմից կարող են նվազեցվել՝ ըստ սահմանված տույժերի: Գիտաժողովի գրավոր փուլի ստուգումը և գրավոր փուլի արդյունքների ամփոփումը կատարվում է 2023թ.-ի հուլիսի 1-ից մինչև հուլիսի 11-ը ընկած ժամանակահատվածում:

5.2 Բանավոր փուլ

Գիտաժողովի բանավոր փուլում յուրաքանչյուր մասնակցի զեկույցի ընդհանուր միավորները որոշվում են՝ զեկույցները գնահատող դատավորների ժյուրիի յուրաքանչյուր անդամի կողմից նշանակած միավորների ընդհանուր գումարով: Գիտաժողովի բանավոր փուլն անցկացվելու է 2023թ.-ի հուլիսի 14-ին: Գիտաժողովի մրցանակաբաշխությունը տեղի կունենա գիտաժողովի բանավոր փուլի ավարտից անմիջապես հետո:
Գիտաժողովի գրավոր փուլի հաղթողը որոշվում է կազմակերպչի կողմից՝ դատավորների կողմից ստուգված զեկույցների արդյունքների հիման վրա, և արժանանում է «Լավագույն գրավոր զեկույց» անվանակարգին:
Գիտաժողովի բանավոր փուլի հաղթողը որոշվում է ժյուրիի կողմից և արժանանում «Լավագույն հռետոր» անվանակարգին:
Գիտաժողովի հաղթող է ճանաչվում այն մասնակիցը, որը գրավոր և բանավոր փուլերում հավաքել է միավորների առավելագույն քանակ: Գիտաժողովի հաղթողը ստանում է «Գիտաժողովի հաղթող» մրցանակը:
Գիտաժողովի կազմակերպիչը կարող է սահմանել նաև այլ խրախուսական մրցանակներ: Գիտաժողովի գրավոր և բանավոր փուլի մասնակիցները կստանան հավաստագրեր, իսկ լավագույն զեկույցները կհրատարակվեն Իրավաբան.net անկախ, մասնագիտական լրատվական կայքում:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՆՈՆ 6.0 Տույժեր

6.1 Զեկույցներին առնչվող տույժեր

Սույն աղյուսակի համաձայն զեկույցներին առնչվող կանոնների խախտումների համար կիրառվում են տույժեր.

Կանոնի համարը	Նկարագիրը	Կիրառվող տույժը
6.1.1	Զեկույցում ինքնության կամ ուսումնառության հաստատության վերաբերյալ որևէ նշում:	7 միավոր (մեկ անգամ)
6.1.2	Սխալ տառատեսակի կամ տառերի սխալ չափսի օգտագործում, տվյալ տառատեսակի սխալ չափսի օգտագործում, տողերի միջև սխալ տարածություն կամ մեջբերումների սխալ ձև:	1 միավոր յուրաքանչյուր խախտման համար, ընդհանուրը՝ մինչև 5 միավոր:
6.1.3.	Էջերի սահմանափակում:	15 էջը գերազանցող յուրաքանյուր էջի համար 1 միավոր, առվելագույնը 4 միավոր:
6.1.4.	Անհամապատասխան լուսանցքներ:	Յուրաքանչյուր էջի համար 0,5 միավոր, առավելագույնը 2 միավոր:
6.1.5.	Զեկույցի կազմի վրա չպահանջվող տեղեկությունների ընդգրկում:	2 միավոր: